Կանանց ռեսուրս կենտրոնների /ԿՌԿ/ եվրոպական միության

Կանոնադրություն ՎԻՆՆԵՏ Եվրոպա

1. Միության անվանումը

Կանանց ռեսուրս կենտրոնների /ԿՌԿ/ եվրոպական միության անվանումը կլինի **ՎԻՆՆԵՏ Եվրոպա**

2. Միության առաքելությունը

Եվրոմիության անդամ պետությունների տեղական, ազգային, տարածաշրջանային կազմակերպությունների հետ համատեղ ջանքերով աջկցել և նպաստել տեղական և տարածաշրջանային կանանց ռեսուրս կենտրոնների գործունեությանը և /կամ այլ նմանատիպ կակնց կազմակերպությունների աշխատանքին նպաստելու հետևյալին.

- կանայք օգտվում են հասարակության իրենց հասանելիք ռեսուրսներից
- կանանց կարողություններն օգտագործվում են հասարակության կողմից
- կանայք և տղամարդիկ հավասար են գնահատվում

Միությունը պետք է ազդեցություն ունենա կանանց կյանքի պայմանների վերաբերյալ կարծիքների ձևավորման և տեղեկավության տարածման գործում: Տեղական, մարզային և ազգային կազմակերպությունների և իշխանությունների հետ համագործակցության միջոցով Միությունը պետք է ձևավորի այնպիսի միջավայր՝ որտեղ կանանց կարողությունները, իրավունքները և պարտականությունները պաշտպանված են: Միությունը պետք է խթանի հավասար աշխատանքային պայմանների և հնարավորությունների ձևավորմանը, նպաստի կանանց և տղամարդկանց համար ձեռներեցության զարգացմանը, և ապահովի սեռերի միջև ուժի և ազդեցության հավասար բաշխումը:

Միությունը պետք է խթանի միջազգային համագործակցությանը:

Միությունը կարող է իրականացնել ցանկացած գործողություն հասսնելու իր նպատակներին:

3. Միության գրանցման վայրը

Միությունը գրանցված է Ստոկհոլմում, Շվեդիայում: Հիմնական աշխատանքները համակարգվում են ՎԻՆԵՏ Շվեդիայի կողմից: Միությունը կառավարվում է քարտողարության աջակցությամբ և օն-լայն պորտալով www.winneteurope.eu որը ծառայում է որպես վիրտուալ գրասենյակ և հաղորդակցման գործիք Միության անդամների, Եվրոխորհրդի և կից կառույցների համար:

4. Անդամակցություն

Միությունը բաց է ազգային, տարածաշրջանային և տեղական կանանց ռեսոքուրս կենտրոնների համար, որոնց նպատակները համընկնում են Միության նպատակների հետ:

Անդամ համարվում են այն կազմակերպությունները, որոնք համապատասխանում են Միության չափորոշիչներին, հաստատվել են խորհրդի կողմից և վճարում են անդամավճար:

Ամեն երկիր կարող է Միության Ընդհանուր Ժողովին /ՄԸԺ/ ունենալ առավելագույնը 5 ձայնի իրավունք: Այն երկրները որոնք ունեն 5-ից ավել անդամներ, պետք է ներքին կագրով որոշել 5 անդամների մասնակցությունը ՄԸԺ-ին: Ազգային մակարդակով համակարգման մեխանիզմները խրախուսվում են:

Եվրոպական միությունները, ազգային, տարածաշրջանային և տեղական կառավարման մարմինները, կազմակերպությունները, ցանցաերը և անհատները ովքեր ցանկանում են աջակցել Միությանը կարող են համարվել աջակցող անդամներ: Աջակցող անդամների քանակը երկրի կտրվածքով սահմանափակում չունի: Ակացող անդամները չունեն ձայնի իրավունք:

Միության անդամությունը բաց է Եվրոպական Միության անդամ երկրների, Եվրոպական Տնտեսական Տարածաշրջանի և այն երկրների համար, որոնք Եվրոպական Միության անդամակցության ֆորմալ գործընթացների մեջ են:

5. Չափորոշիչներ / ընդհանուր սահմանումներ

Կանանց Ազգային Ռեսուրս Կենտրոնը կազմակերպություն է, որը

- Աշխատում է համապատասխան սահմանված ռազմավարական նպատակներին
- Գործունեություն է ծավալում ազգային մակարդակում
- Հիմնված է տարածաշրջանային և տեղական կանանց ռեսուրս կենտրոնների վրա
- Բաց է երկրում գործող տարածաշրջանային և տեղական ռեսուրս կենտրոնների համար
- Հանդիպումների վայր է հանդիսանում և աջակցում է տարածաշրջանային և տեղական ռեսուրս կենտրոններին
- Գործողությունները նախաձեռնվում և իրականացվում են կանանց կողմից
- Հիմնված է ազգային իշխանությունների և/կամ կազմակերպությունների կողմից կամ նրանց աջակցությամբ

- Կառավարմում է գործողությունների պլանով և բյուջեով, ունի տարեկան հաշվետվություններ
- Ունի խորհուրդ /վերահսկող մարմին և գործադիր մարմին՝ պատասխանատու կառավարման համար
- Շահույթ չհետապնդող կազմակերպություն է:

Կանանց Տարածաշրջանային Ռեսուրս Կենտրոնը կազմակերպություն է, որը

- Աշխատում է համապատասխան սահմանված ռազմավարական նպատակներին
- Գործունեություն է ծավալում տարածաշրջանային մակարդակում
- Հիմնված է տարածաշրջանային և տեղական կանանց ռեսուրս կենտրոնների վրա
- Բաց է մարզում գործող մարզային և տեղական ռեսուրս կենտրոնների համար
- Հանդիպումների վայր է հանդիսանում և աջակցում է մարզային և տեղական ռեսուրս կենտրոններին
- Գործողությունները նախաձեռնվում և իրականացվում են կանանց կողմից
- Հիմնված է մարզային իշխանությունների և/կամ կազմակերպությունների կողմից կամ նրանց աջակցությամբ
- Կառավարմում է գործողությունների պլանով և բյուջեով, ունի տարեկան հաշվետվություններ
- Ունի խորհուրդ /վերահսկող մարմին և գործադիր մարմին՝ պատասխանատու կառավարման համար
- Շահույթ չհետապնդող կազմակերպություն է:

Կանանց Տեղական Ռեսուրս Կենտրոնը կազմակերպություն է, որը

- Աշխատում է համապատասխան սահմանված ռազմավարական նպատակներին
- Գործունեություն է ծավալում տեղական մակարդակում և մասնակցում է համայնքային զարգացմանը
- Գուրծում է կանանց կարիքների հիման վրա
- Բաց է կանանց և համայնքում գործող կանանց ռեսուրս կենտրոնների համար
- Հանդիպումների վայր է հանդիսանում և աջակցում է տեղի կանանց
- Գործողությունները նախաձեռնվում և իրականացվում են կանանց կողմից
- Հիմնված է տեղական և մարզային իշխանությունների և/կամ կազմակերպությունների կողմից կամ նրանց աջակցությամբ
- Կառավարմում է գործողությունների պլանով և բյուջեով, ունի տարեկան հաշվետվություններ

- Ունի խորհուրդ /վերահսկող մարմին և գործադիր մարմին՝ պատասխանատու կառավարման համար
- Շահույթ չհետապնդող կազմակերպություն է:

6. Տարեկան անդամավճար
   Անդամավճարը սահմանվում է ՄԸԺ-ի կողմից;

7. Կազմակերպական կառուցվածքը

ՄԸԺ-ն հանդիսանում է Միության որոշումներ կայացնող ամենաբարձր մարմինը:

ՎԻՆՆԵՏ Եվրոպայի Խորհուրդը ընտրվում է ՄԸԺ-ի կողմից:

8. Առաջարկություններ

ՄԸԺ-ին ներկայացվող առաջարկությունները պետք է գրավոր ներկայացվեն Խորհրդին, ամենաուշը Միության Ընդհանուր Ժողովից 6 շաբաթ առաջ:

9. Խորհրդի անդամի թեկնածության առաջադրում

Ընտրական հանձնաժողովը պետք է ստանա Խորհրդի անդամի թեկնածության առաջադրումները Միության Ընդհանուր Ժողովից 6 շաբաթ առաջ:

10. Խորհուրդը

Խորհուրդը ընտրում է ՄԸԺ-ի կողմից երկու տարի ժամկետով: Խորհուրդն ունի նախագահ՝ ընտրված ՄԸԺ-ի կողմից, փոխնախագահ և մեկական ներկայացուցիչ Միության անդամ յուրաքանչյուր երկրից: Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի փոխարինող անդամ: ՄԸԺ-ն սահմանում է փոխարինող անդամի լիազորությունները:

Որոշումները ընդունվում են մեծամասնության որոշմամբ: Նախագահն ունի որոշիչ ձայն: Քվորումը ապահովված ՝ համարվում Խորհրդի անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում:

Խորհրդի հիմնական պարտականություններն են Միության Տարեկան Ընդհանուր Ժողովի կազմակերպումը և ընդունած որոշումների իրականացումը: ՄԸԺ-ն որոշում է խորհրդի մնացած առաջադրանքներն ու դերերը ուղղված ՄԻության գործունեության արդյունավետ իրականացվամը:

Խորհուրդը կարող է ունենալ աշխատակազմ մայր գրասենյակներում և ծրագրերում: Աշխատակազմի և գործադիր հանձնաժողովի աշխատանքային գրաֆիկը սահմանվում է խորհրդի կողմից:

11. Միության գործունեության տարին համարվում է օրացուցային տարին:

12. Գործողությունների պլան, բյուջե

Ֆինանսական տարին համարվում է օրացուցային տարին: յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար պետք է լինի գործողությունների պլան և բյուջե: Ծրագիր-առաջարկները մշակվում և խորհրդի կողմից ներկայացվում են ՄԸԺ-ին՝ հաստատման համար:

13. Լիազորություն

Միության գործունեությունը հաստատվում է Խորհրդի կողմից: Խորհուրդը կարող է ընտրել 1-2 հոգի՝ գործելու որպես լիազորված անձ:

14. Աուդիտ

ՄԸԺ-ն ընտրում է ընտրում է 2 աուդիտոր և 2 տեղակալ:

15. Ընտրության իրավունք

Յուրաքանչյուր քվերակելու իրավունք ունեցող անդամ ՄԸԺ-ին ունի 1 ձայնի իրավունք: Ակակցող անդամները չունեն ձայնի իրավունք:

Խորհրդի անդամները իրվունք չունեն մասնակցելու խորհրդի պարտավորությունների սահմանման հետ կապված քվերակություններին, աուդոշիտորների և տեղակալների ընտրությանը:

Որոշումները ընդունվում են մեծամասնության որոշմամբ: Նախագահն ունի որոշիչ ձայն: Քվորումը ապահովված՝ համարվում Խորհրդի անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում:

Անհատների ընտրության ժամանակ անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել փակ ընտրություն: Ձայների հավասար բաշխվածության դեպքում Խորհրդի նախագահը ունի որոշիչ ձայն:

16. Միության ԸՆդհանուր Ժողով

ՄԸԺ-ն իրականացվումէ յուրաքանչյուր տարի, մինչև հուլիս ամիսը:

ՄԸԺ-ի մասին տեղեկությունը պետք է ներկայացվեն ՄԸԺ-ից ամենաքիչը 4 շաբաթ առաջ: Արտահերթ ՄԸԺ-ը կարող է անցկացվել եթե ընտրելու իրավունք ունեցող անդամների մեկ երրորդը այն համարում է անհրաժեշտ:

ՄԸԺ-ին վերաբերող փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները պետք է հասանելի լինեն ՄԸԺ-ից ամենաքիչը 4 շաբաթ առաջ և արտահերթ ՄԸԺ-ից ամենաքիչը 2 շաբաթ առաջ:

Ընտրական հանձնաժողովի առաջարկները էլեկտրանային տարբերակով պետք է հասանելի լինեն ՄԸԺ-ից ամենաքիչը 2 շաբաթ առաջ:

Օրակարգը պետք է ներառի հետևյալ կետերը.

- Արդյոք հանդիպումը կազմակերպվել է ընթացակարգին համապատասխան
- Արդյոք քվորումը ապահովված է
- Օրակարգի հաստատում

ՄԸԺ-ի ժամանակ սահմանվում են

- Նախագահ հանդիպումների համար
- Գործավար հանդիպումների համար
- Երկու հոգի արձանագրությունների կազմման և ձայների հաշվարկման համար
- Խորհրդի տարեկան հաշվետվություն և ֆինանսական պլան
- Առաջարկություններ
- Գործողությունների պլանի և բյուջեի սահմանում և հաստատում
- Խորհրդի լիազորում Գործողությունների պլանի և բյուջեի իրականացման համար
- Հաջորդող տարվա անդամավճարների հասմանում և հաստատում
- Խորհրդի և աուդիտորների համար անդավաճար
- Աուդիտորների ընտրություն
- Աուդիտորների տեղակալների ընտրություն
- Խորհրդի անդամների և փոխարինողների համալրում
- Ընտչրական հանձնաժողովի ընտրություն
- Եվ այլ անհրաժեշտ դրույթներ

Ամեն երկու տարին մեկ ՄԸԺ-ն ընտրում է

- Նախագահ
- Գանձապահ
- Խորհրդի անդամներ
- Տեղակալներ

17. Ընտրական հանձնաժողովը

Ընտրական հանձնաժողովը ընտրում է ՄԸԺ-ի ժամանակ, մինչև հաջորդ ՄԸԺ-ն: Այն բաղկացած է անեմաքիչը 10 անդամից և ներառում է ներկայացուցիչներ Եվրոպայի հյուսիսից, հարավից, արևելքից և արևմուտքից: Անդամներից մեկը համակարգում է հանձնաժողովի աշխատանքները:

Ընտրական հանձնաժողովի առաջարկությունները էլեկտրոնային տարբերակով պետք է հասանելի լինեն մայր գրասենյակներում ՄԸԺ-ից ամենաքիչը 2 շաբաթ առաջ:

18. Կանոնադրական փոփոխություններ

ՄԸԺ-ն իրավունք ունի ձայների մեծամասնությամբ կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություններ մտցնել, որոնք չեն հակասում Միության շահույթ չհետապնդելու նպատակների և համապատասխանաբար 2, 10, 18, 20 դրույթներին:

2, 10, 18, 20 դրույթները կարող են փոփոխվել, եթե այդ փոփոխությունը հաստատվել է առնվազն 2 Ընդհանուր հանդիպումների ժամանակ, որոնցից մեկը ՄԸԺ-ն է:

Եվրոպական Միության պաշտոնական կանոնադրական չափորոշիչներին համապատասխանելու համար ՄԸԺ-ն կամ արտահերթ ընդհանուր ժողովը կարող է որոշում կայացնել փոփոխելու ՎԻՆՆԵՏ Եվրոպա Միության կանոնադրությունը:

19. Միությունից վտարումը

ՄԸԺ-ի ժամանակ խորհրդի առաջարկությամբ անդամը կարող է վտարվել Միությունից: Խորհուրդը պետք է հիմնավորի վտարման պատճառները:

20. Լուծարումը

Խորհուրդը կարող է առաջարկություններ ներկայացնել Միության լուծարման համար: Այդ որոշումը պետք է քննարկվի երկու իրար հաջորդող ՄԸԺ-ների ժամանակ՝ երկու երրորդ ձայների որոշմամբ:

Լուծարման դեպքում Միության գույքը պետք է նվիրատվությամբ տրվի Միության նպատակներին համապատասխան գործող կազմակերպությունների կամ հետազոտողների:

21. Գիտական և քաղաքական խորհրդատվական հանձնաժողով

Խորհրդատվական հանձնաժողովը պետք է ձևավորվի և գործի որպես գիտելիքների շտեմարան ՎԻՆՆԵՏ Եվրոպայի համար: Հանձնաժողովի նպատակն է ԵՄ անդամ երկրների կարիքների ուսումնասիրության միջոցով նպաստել տարածաշրջանում կանանց հավասար հնարավորությունների, աշխատանքի և ձեռներեցության զարգացմանը: Խորհրդատվակա հանձնաժողովի անդամները ընտրվում են խորհրդի որոշմամբ և հաստատվում ՄԸԺ-ում:

Հանձնաժողովի անդամների 50%-ը ԵՄ անդամ պետությունների քաղաքական գործիչներ են, մյուս 50Ջ-ը՝ հետազոտողներ: Հետազոտողները պետք է փորձառու լինեն հետևյալ ոլորտներում՝ քաղաքացիական հասարակություն, տարածաշրջանային զարգացումներ, աշխատաշուկա. Ձեռներեցություն, ՏՏՀ, հավասար հնարավորություններ և գենդերային հեռանկարներ: